**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2**
**ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/17 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ**
**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

**ք. Մեծամոր**

**10 մարտի 2025թ.**

2025թ. մարտի 3-ից մարտի 10-ը, ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, Վարչական կենտրոն 4 հասցեում գտնվող Մեծամորի համայնքապետարանի շենքում տեղի շչակների ձեռքբերման ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/17 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Ն. Սահակյան՝ Մեծամորի համայնքապետարանի զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի գլխավոր մասնագետ,

Ա. Քերոբյան՝ Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ,

Լ. Մուրադյան՝ Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի գլխավոր մասնագետ:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ն. Սահակյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, Վ. Վարդանյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների, աճուրդի առաջարկված մեկնարկային գների և այլ անհրաժեշտ տեղեկությունների մասին:
2. Ընթացակարգին հայտ ներկայացված մեսնակիցների և ներկայացված հայտերը գնահատելու մասին:
3. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:
4. Ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներ որոշելու մասին:

5. Համակարգի միջոցով գեներացված հայտարարություն/ներ/ի և անգործության ժամանակահատված կիրառելու կամ չկիրառելու մասին:

6. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների եվ հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

7. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ, ԱՃՈՒՐԴԻ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2025թ-ի մարտի 3-ին, ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, Վարչական կենտրոն 4 հասցեում գտնվող Մեծամորի համայնքապետարանի շենքում ժամը 04:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտարարեց գնման առարկաների վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը.

ՀՀ դրամ

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Աճուրդի մեկնարկային գին | Մեկնարկ | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|
| 1 | Շչակ C-40 | 1.680.000.00 | 3/4/2025 16:00 | 2,100,000.00 |
| 2 | Շչակ C-40E | 2.750.000.00 | 3/4/2025 16:00 | 3,520,000.00 |

Ընթացակարգի հայտերի ներկայացումն ու բացումը, ինչպես նաև՝ հակադարձ աճուրդի անցկացումը նախատեսված էր https://eauction.armeps.am/ կայքի միջոցով՝ հրավերով և համակարգով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՄԵՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցները/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցե, հեռ. | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|
| 1 | «ՏՆՄ» ՍՊԸ | ՀՀ Երևան, Օրբելի 33Ա, 15, +37491437410 | deltant@mail.ru | 00216627 |
| 2 | «Ջի-ԷՍ-Սի» ՍՊԸ | ՀՀ. ք. Երևան, Աճեմյան 18₂. 44₂ին., +374 55990991 | hikvision.gsc@gmail.com | 02258906 |
| 3 | «Ուայդ Գեյթ» ՍՊԸ | ք. Երևան, Չարենցի 4/66, +37495909009 | wide.gate@mail.ru | 01533979 |
| 4 | «ՍՕՍ Սիսթեմս» ՍՊԸ | ք. Երևան, Հր. Ներսիսյան փ. ՓԿՂ./Շ/1/103, +374 93 88 90 00 | vt@sossystems.am | 02605138 |
| 5 | ԱՁ Արամայիս Եպիսկոպոսյան | ք. Բյուրեղավան, 1-ին թղմ, 10₂, բն 5, +37477705774 | episkoposyan@list.ru | 82010065 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 6 | «ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 16, բն.53, +37496070602 | info@impex.am | 00165322 |
| 7 | «ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | ԿԻԵՎՅԱՆ Փ. / Շ / 8 / 62 ԲՆ. ԱՐԱԲԿԻՐ 0028, 091575572 | sopranoarm@gmail.com | 08287363 |
| 8 | «ՎԻ ԷՍ ՏԻ ՍՔԱՅ» ՍՊԸ | ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Աստղաձոր 24փ. տ.1, 094-17-03-92 | vst-sky.llc@mail.ru | 8430756 |

2025 թվականի մարտի 4-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ՝ համակարգի միջոցով գնահատման մեջ ներառված.

1. Հայտերը կազմվել և ներկայացվել են Ընթացակարգի հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան.
2. Ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.
3. Ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին, բացառությամբ՝ «ՏՆՄ» ՍՊԸ-ի կողմից 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ներկայացված «Ապրանքի ամբողջական նկարագրի փաստաթղթում» առաջարկվող ապրանքի «ֆիրմային անվանումը», «ապրանքային նշանը», «մակնիշը» և «արտադրողի անվանումը» դաշտերը լրացված է՝ համապատասխանաբար 1-ին չափաբաժնի մասով՝ Շչակ C-40, 2-րդ չափաբաժնի մասով՝ Շչակ C-40E: Սակայն անհրաժեշտ է հստակ նշել առաջարկվող ապրանքի «ֆիրմային անվանումը», «ապրանքային նշանը», «մակնիշը» և «արտադրողի անվանումը»:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2025 թվականի մարտի 5-ին, Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների նախնական և վերջնական գնային առաջարկները.

Ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների՝ ընտրված լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

ՀՀ դրամ

| Չ/Հ | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | Ընտրված մասնակից « X » |
| 1 | ՏՆՄ ՍՊԸ | 2,100,000.00 | 4,000,000.00 | 20% | 4,800,000.00 | 1,230,000.00 | 20% | 1,476,000.00 | X |
| 1 | «ՋԻ-ԷՍ-ՍԻ» ՍՊԸ | 2,100,000.00 | 1,750,000.00 | 20% | 2,100,000.00 | 1,528,600.00 | 20% | 1,834,320.00 | - |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ուայդ Գեյթ ՍՊԸ | 2,100,000.00 | 2,100,000.00 | 0 % | 2,100,000.00 | 1,595,800.00 | 0 % | 1,595,800.00 | - |
| 1 | ՍՕՍ Սիսթեմս ՍՊԸ | 2,100,000.00 | 1,680,000.00 | 20 % | 2,016,000.00 | 1,680,000.00 | 20 % | 2,016,000.00 | - |
| 1 | Ա/Ձ Արամայիս Եպիսկոպոսյան | 2,100,000.00 | 2,100,000.00 | 0 % | 2,100,000.00 | 2,100,000.00 | 0 % | 2,100,000.00 | - |
| 1 | «ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ | 2,100,000.00 | 25,000,000.00 | 20 % | 30,000,000.00 | 25,000,000.00 | 20 % | 30,000,000.00 | Մերժված |
| 1 | ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ ՍՊԸ | 2,100,000.00 | 550,000,000.00 | 20 % | 660,000,000.00 | 550,000,000.00 | 20 % | 660,000,000.00 | Մերժված |
| 1 | «Վի ԷՍ Տի ՍՔԱՅ» ՍՊԸ | 2,100,000.00 | 4,600,000,000.00 | 20 % | 5,520,000,000.00 | 4,600,000,000.00 | 20 % | 5,520,000,000.00 | Մերժված |
| 2 | ՏՆՄ ՍՊԸ | 3,520,000.00 | 4,000,000.00 | 20 % | 4,800,000.00 | 2,080,000.00 | 20 % | 2,496,000.00 | X |
| 2 | «Ջի-ԷՍ-Սի» ՍՊԸ | 3,520,000.00 | 2,933,333.34 | 20 % | 3,520,000.00 | 2,502,000.00 | 20 % | 3,002,400.00 | - |
| 2 | ՍՕՍ Սիսթեմս ՍՊԸ | 3,520,000.00 | 2,750,000.00 | 20 % | 3,300,000.00 | 2,584,500.00 | 20 % | 3,101,400.00 | - |
| 2 | Ուայդ Գեյթ ՍՊԸ | 3,520,000.00 | 3,520,000.00 | 0 % | 3,520,000.00 | 2,639,500.00 | 0 % | 2,639,500.00 | - |
| 2 | Ա/Ձ Արամայիս Եպիսկոպոսյան | 3,520,000.00 | 3,520,000.00 | 0 % | 3,520,000.00 | 3,520,000.00 | 0 % | 3,520,000.00 | - |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | «ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ | 3,520,000.00 | 25,000,000.00 | 20% | 30,000,000.00 | 25,000,000.00 | 20% | 30,000,000.00 | Մերժված |
| 2 | ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ ՍՊԸ | 3,520,000.00 | 550,000,000.00 | 20% | 660,000,000.00 | 550,000,000.00 | 20% | 660,000,000.00 | Մերժված |
| 2 | «Վի ԷՍ Տի ՍՔԱՅ» ՍՊԸ | 3,520,000.00 | 4,600,000,000.00 | 20% | 5,520,000,000.00 | 4,600,000,000.00 | 20% | 5,520,000,000.00 | Մերժված |

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

2025 թվականի մարտի 5-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:

2. Նիստը կասեցնել 1 աշխատանքային օրով և առաջարկել Մասնակից/ներ/ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված շտկման ենթակա անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

2025 թվականի մարտի 7-ին Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Մասնակից/ներ/ի կողմից սահմանված ժամկետներում ներկայացվել է արձանագրված թերությունների շտկված տարբերակները:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

2025 թվականի մարտի 10-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:

2. Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը չստուգել՝ պատճառաբանված որոշման բացակայության պատճառով:

3. Համակարգի կողմից գնահատման մեջ ներառված հայտերի գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

4. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| **Հ/Հ** | **Գնահատման մեջ ներառված մասնակցի անվանումը*** | **Գնահատման արդյունքը** |
|---|---|---|
| 1, 2-րդ | «ՏՆՄ» ՍՊԸ՝ | բավարար |

*Գնահատվում են միայն մասնակիցների կողմից ներկայացված այն հայտերը, որոնք համակարգի կողմից ներառվել են գնահատման ենթակա հայտերի մեջ:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 4. ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և այդպիսին չճանաչված մասնակից հայտարարել սույն արձանագրության 3-րդ կետով ներկայացված Աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցներին:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 5. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳԵՆԵՐԱՑՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ/ՆԵՐ/Ի և ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՄ ՉԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Վ. Վարդանյանը ներկայացրեց գնահատող հանձնաժողովի կողմից իրականացված գնահատումների արդյունքում՝ համակարգի կողմից տրամադրված հայտարարություն/ներ/ի տեքստ/եր/ը:

Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
2. Հաստատել համակարգի կողմից տրամադրված հայտարարություն/ներ/ի տեքստ/եր/ը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 6. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:
2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց համակարգի կողմից տրամադրված պայմանագրերի նախագծերը: Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել համակարգի կողմից տրամադրված պայմանագր/եր/ի նախագ/ի/ծ/եր/ը,

2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակիցներին համակարգի միջոցով ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ն. Սահակյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Ա. Քերոբյան ____________

Լ. Մուրադյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Վ. Վարդանյան ____________